14303

ՆԵՐԳԱՂԹԻ ՏԱՂԵՐ

ԳՐԵՑ

ՀԱՅԿ ՄՈՒՐԱՏԵԱՆ

1932

ՏՊԱՐԱՆ "ԱՐԱՐԱ,, ԽԱՆՏԷՔ

891.99
Մ-99

891.99
Մ-99

ԴԷՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ

1, Ողջոյն ձեզի, ո՛վ մեր հայ եղբայրներ
Էլ ինչ՞է տխրիք ձեզ աւետիկ մ՚եմ բերեր
Նոր տարուայ առթիւ տամ ձեզ նոր լուրեր
Թող ժպտի դէմքնիդ, սրբէք արցունքներ
Սահակն ու Դանուշն ուրիշ օգնիչներ
Եկեր են որ հայեր պիտ՞ տանին եղեր
Մեր հին հայրենիք մեր հին երկիրներ:

2. Էլ ինչո՞ւ լանք, ինչո՞ւ տխրինք ախբերք ջան
Քան որ բացուաւ հայրենիքին յոյս ճամբան
Կը ժողվենք մեր կահ կարասիք, աւել, թասն ու թէնճիրէն:

Հին կօշիկներ, գուլպայ, ասեղ՝ու լարան
Հայտէ պապամ կը նստինք նաւ, կելլենք Հայաստան

Էլ ինչո՞ւ լանք ախբերք անուշ ձեզ ղուրպան:

3. Զը լսեցի՞ք, չը կարդացի՞ք, թերթերն անհամար
Ի՞նչ կը գրեն, ի՞նչ կը պատմեն մեզ համար
Օգնականներ, Լիկան, Հօկն ու Ռամկավար
Պատրաստեր են, չայ ու չայնիկ, սամաւար
Հաց ու պանիր, սոխ ու սխտոր ու ծաւար
Զը լսեցի՞ք ժողովրդին մէջը ինկած էս հաւար:

1134:84

4. Հերիք չեղա՞ւ խելքերնիս տանք ուրիշին
Հնազանդինք, ասոր անոր եւ Բէմալը ապուշին
Եւրոպացուն, Ամերկացուն, մինչեւ Արաբ հապշին
Գազան Թուրքին, անգութ քիւրտին եւ զանազան այլ ազգին
Ռէժիմին տակ կապրինք զուրկ ու անբաժին
Մնացեր, ենք ինչպէս մեռել մ'վր նաշին
Հերիք չեղա՞ւ մեր իրաւունք տանք ուրիշին:

5, Հերիք չեղա՞ւ այսքան տարի տառապաղ
Աչքերնիս գոց բերաննիս բաց, ամա՜ն՝հաց
Մեզ հայրենիք, բնակարան, չոր կամ թաց
Կը պոռայինք Աստուած մեզի դուռ մը բաց
Ըլլայ դժոխք, կամ թէ դրախտ լուսաբաց
Հերիք չեղա՞ւ որ սպասենք այլոց հարց:

6. Հերիք չեղա՞ւ այսքան տարի միշտ գերի
Կերած հացնիս, տարեկան է կլկել կամ գարի
Դրացինիս, մէկը Թիւրք, մէկ արաբ է. մէկ քիւրտը վայրի
Մէկ Առնաւուտ մէկ Եզիտի մէկը մեզ կը հրէ միշտ չարի
Ցոյս դնելով կ'սպասենք մին, ազատարարի
Հերիք չեղա՞ւ, որ սպասենք այս տարի չէ, գալ տարի:

7. Հերիք չեղա՞ւ միշտ յառաջենք Հայաստան
Տպենք կոչեր, ուղղենք դէպի այլաստան
Թող լսեն հայեր ցընծան ու թնդան
Թէ բացուած է զդուռն մերն արքայութեան
Ղեկավարներ, Վեհ Սահակն ու Շահվերդեան
Եկեր են որ մեզ պիտ տանին Հայաստան
Հերիք չեղա՞ւ քաշենք կարօտ Հայաստան:

8. Հերիք չեղա՞ւ միշտ կը լսենք այլոց ծայն
Արաբ քըֆրէ իլաան ապուքուն էրման
Ֆրանսացին ալէ՛ քօշոն արմենեան
Բիւրտը պոռայ, լեխըն սապապ վա Ֆլան
Թիւրքը կրկնէ, կեավուրլէրէ հէր Ֆէրման
Կ'արտաքսեն մեզ սահմանէ սահման:
Հերիք չէ՞ լսենք այս անախորժ ծայն:

9. Մեզ ինչ տէյի պօլշեւիկ է Հայաստան
Կոմինիստ են պաշտօնեաներն դատարան
Չկա՞յ. ոչ ՝ժամ, ոչ կաթողկոսարան
Կամ մեզ ի՞նչ պէտք ուրկէ կըլլայ հրաման
Ով որ տանի ով որ հսկէ մեր վրան
Ով որ առնէ մեր մաման զայն կը կոչենք մեր պապան
Մեզ ի՞նչ պէտք ուրիշին խօսք. որ կ'ըսեն լաւ չէ Հայաստան:

2003

10. Զուզողն ինչո՞ւ քիթն ու բերան պոչ թաթխէ
Միտքերնիս խանգարէ, երեսը սեւցընէ
Տաք ապուրին մէջ պաղ ջուրը խառնէ
Ինք երթալ չի կարող մեզ ճամբէն կընէ
Օտարին դատը ինք միշտ պաշտպանէ
Այս գործին ի՞նչ ըսէք խայտառակութիւն չէ՞:

11. Հերիք չեղա՞ւ, չը կշտացա՞ք միշտ պանդուխտ
Դրամ չկայ, առնենք մեկան գրիչ թուղթ
Նստինք գրենք մեր ցաւ ու դարտ շուտ մը շուտ
Ինչպէս կապրինք քէմբերու մէջ ցերեկ ու մութ
Ամրան տաքը, թախտապիթին, ձմրան ցուրտ
Հացը գտնենք, չկայ ոչ թան ոչ եղուրտ
Հերիք չեղա՞ւ միթէ լա՞ւ է այս ապրուստ:

12. Հերիք չեղա՞ւ, որ միշտ խօսինք այլ լեզու
Խպզէ, ճանէ, թում ու, պասալ, էքմէք, սու
Պոնժուռ, պոնսուառ, մատմուազէլ, մէսիւոյ.
Չը զզուեցա՞նք, ճաթլաղ քէպապ պուզլի սու
Չը բաւե՞ց լսենք. Ահմէտ, Մուհամմէտ, Մուսթա-
ֆա, Եուսու
Էլ հերիք չէ՞, որ չը խօսինք մայր լեզու:

13. Ի՜նչ շուտ մոռցանք հին հայկական դիրք
Տեսած գործերնիս մասխարայ է. պար ու սիրք
Նոր նոր մօտայի միշտ կը հետեւինք
Սինէմա, թատրոն, մէյխանէ, թաքսիք
Պտոյտներ կ'ընենք, ճէպ չկայ մէթլիք:

14. Մեզ ինչ պէտք ապրենք, ինչպէս ուրիշներ
Պէտք չէ՞ որ յիշենք տախտակէ քէմբեր
Դուրսը նայիս նէ, մէկ մէկ միւսեօներ
Տունն երթաս իշկես մուկ ու կատուներ
Կէօպէկ կը նետեն չոր հաց չեն գտներ:

15, Վեց օր կ'աշխատինք, օր մը կը ծախսենք
Երբ պիտ գայ կիրակին համա կ'ըսպասենք
Անօթի փորով չալըմ կը ծախենք
Բէմանիին ու ուտին ծայնին կը վազենք:

16. Վատրկած դրամնիս օրական մէճիտ
Հագած հագուստնիս, մին մօտա ճրտիտ
Կերածնիս ոռստոյ, սասիչոյ, ըատիտ
Կօնծածնիս. օղի, գօնեակ ու ըմպիտ
Մէզան է պրզը, ու ֆստոյ ըապիտ:

17. Գրավաթ կապած, պաստոն ձեռքն առած
Փողոցներ ման կուգայ ստամոքս պարպուած
Գասապն ու պագգալ օձիկին փակած
Պարտքերնին կուզեն ու խիստ զայրացած
Փողոցին մէջտեղ կը մնայ ապշած:

18. Օրիորդին իշկեք, մազերն է կտրեր
Աղջիկայ շնորհք վրայէն փախեր
Խայտին խաղցուցած կապիկն է դարձեր
Ճերմակ ծրպտուած, շրթունքներ ներկեր
Բայց քսած փոթրան ալ պարտքով է բերեր:

19, Կարճ կարճ ֆստաներ մօտայէն հագեր
Գլխարկը ծռած չանթան է կախեր
Թիզ մը բարձրութեամբ կօշիկ է հագեր,
Հերուէն դիտես, թէքը չկայ եղեր
Քիչ մը մօտենաս սիրտդ է խառնուէր:
Եթէ հարցնես, մօտայ է եղեր:

20. Պարտատէր տունն եկած դրամն է ուզեր
Մառամն ու խայտն իրար են ընկեր
Հէ՛տ հագ էլ փոթրայ, ուզողն է եկեր
Գասապը դանակով դուռն է սպասեր:

21. Բառասուն տարեկան, լխկոտած կիներ
Մօտայով փոթրայով մեր աչքն են կապեր
Աղջիկ ֆիաթով ինքզինքնին ծախեր
Անանկ ջահիլիմ գացած են փակեր
Սինսիլէն չէ տեսած այնպէս հատիկներ
Եթէ հարցընես, իր բախտն է ժպտեր:

22. Կոլթուղը մտած ճամբայ կը քալեն
Տեսնողներն մայրն ու իր տղան կարծեն
Շիփ շիտակ մաղազա գնումի կը վազեն
Է՞շ պտտոյ ըմմէք շուտ մը կ'հարցնեն
Այս խօսքին վրայ տուն գալէն յետոյ
Մէյ մըն ալ նայիս նէ իրար՝ ծգած են:

23. Խումբ խումբ սէյրէկներ իրար կը գտնին
Եկեղեցիին դուռը շարքով կը շարուին
Որ մէկ աղջկան որ քիչ մը հաւնին
Սչքով ու ունքով, կառնեն կը տանին
Ո՞ւր էին, հարցնէք աղօթքի գացին:

24. Հայ դպրոց չեն երթար կը վազեն ուրիշ
Օրէնքնին կը փոխեն կատանան պախշիշ
Հայութիւն կ'ուրանան կ'ըսեն տին պիթմիշ
Պիզէ կէրէկ եօք սագալը քէշիշ:

25. Դեռ չեն հաւնիր Հայաստանի օրէնքին
Պոլշեւիկ են, հակառակ են մեր տինին
Ծօ՛, հէ՛յ, տաւար, ուրտեղ մնաց քեզի տին
Օր մը փոստ ես, օր մը եահուտի
Օր մը կաթոլիկ, օր մը սատանի որդի
Հէյ դուն ապուշ, ուրտեղ մնաց քեզի տին:
Դեռ շատ բաներ պիտի ըսի
Սմմա քէֆս գինի կուզի:

26. Հազար ապրի Հայաստանի վարչապետ
Սահակ սատրազամ ու Ընկեր Շահվերդ
Որ մեզ պատրաստեն նաւ ու նաւապետ
Շուտ մը երթանք խալսինք ու չդառնանք ետ
Հաստատուինք հոնտեղ չը լսենք կէլ կիթ
Մնանք անսասան լուրջ մեր երկրի հետ:

ՀԱՅԿ ՄՈՒՐԱՏԵԱՆ

2013
14303

ԳԻՆ 1 ՊԱՐԳՈՒՏ